# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3, հեռ. (0284)2-25-52

*08 դեկտեմբեր 2016թ.* N 03/06-134

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Կից ուղարկվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 5-ի արտահերթ նիստում ընդունված թիվ 15-<<Ա>>-ից մինչև 32-<<Ա>> որոշումները:

Առդիր՝ 53 թերթ:

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ № 9768
13 12 2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀՐԱՄ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. «ՎԵՐԻՇԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. «ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՇԵՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.«ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

17. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 5-ի N 16-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Մարիաննա Աբգարյան-Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապի, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ/
2. Նարեկ Հարությունյան-Գորիս համայնքի ղեկավարի օգնական
3. Ժասմեն Խաչատրյան-Գորիս համայնքի թիվ 2 ՆՈՒՀ-ի տնօրեն
4. Արմեն Սարգսյան-Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
5. Անահիտ Մաշուրյան-Գորիսի ՍԱՏԳ առաջատար մասնագետ
6. Արփինե Հովհաննիսյան-ՀՀ Սյունիքի մարզի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանաց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագեն /Գորիսի ներկայացուցիչ/
7. Էլմիրա Բալասանյան-<<Փերի>> մանկական ամսագրի խմբագիր
8. Լիլիթ Դավթյան–ՀՀ Ոստիկանության Գորիսի բաժնի անչափահասների գործերով խմբի տեսուչ
9. Արմեն Մկրտչյան–Գորիս համայնքի ավագանու անդամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 17-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և Հայաստանի համայնքների միության գործադիր տնօրեն՝ Ն.Լափաուրիի 16.11.2016թ. թիվ ԵՆ-1611/1140 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքին անդամակցել Հայաստանի Համայնքների Միությանը:

2.Հայաստանի Համայնքների Միությանը փոխանցել համապատասխան տարեկան անդամության վճարը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»

ք.Գորիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

*իրավաբանական
անձանց միություն*

UNION
OFCOMMUNITIES
OF ARMENIA

*Union of
Legal Persons*

Հասցե՝
Չարենցի 1, 2-րդ հարկ,
0025, Երևան,
Հայաստանի Հանրապետություն

Adress:
1 Charents str., 2-nd Floor,
0025, Yerevan,
Republic of Armenia

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿԵՍԹԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2470101114300010
ՀՎՀՀ 03534085

Հեռ./Tel: +374 10 574501
Ֆաքս/Fax: +374 10 575219
Բջջ./Mobile: +374 91 404853
+374 93 404853

E-mail: info@caa.am
eminyeritsyan@caa.am
natalya@caa.am

Http:// www.caa.am

ԵՆ-1611/1140

16-ը նոյեմբերի, 2016թ.

Գորիս համայնքի ղեկավար
Պարոն Վաչագան ԱԴՈՆՑԻՆ

*Հարգելի պարոն Ադոնց,*

Տեղեկացնում եմ, որ Հայաստանի համայնքների միության հանրապետական խորհուրդը 2016 թվականի նոյեմբերի 9-ի նիստով, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականին «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարած փոփոխությունները, կայացրել է արձանագրային որոշում Հայաստանի համայնքների միությանը խոշորացված նախկին համայնքների անդամակցությունն օրենքի ուժով դադարեցնելու մասին:

Միության Հանրապետական խորհուրդը նաև արձանագրային որոշում կայացրեց դիմել նոր ձևավորված համայնքներին՝ Հայաստանի համայնքների միություն իրավաբանական անձանց միությանը անդամակցելու համար:

Ուստի, խնդրում եմ Գորիս համայնքի ավագանու առաջիկա նիստում ներառել Հայաստանի համայնքների միությանը Գորիս համայնքի անդամակցության հարցը, միաժամանակ, բյուջեում նախատեսելով համապատասխան տարեկան անդամավճար, որը հաշվարկվում է համայնքի մեկ բնակչի հաշվով տարեկան 10 ՀՀ դրամի չափով:

Անհրաժեշտության դեպքում Միության վարչության ներկայացուցիչները կարող են մասնակցել ավագանու նիստում հարցի քննարկմանը և ներկայացնել Միության գործունեությունը:

Հարգանքներով՝

Նատալյա ԼԱՓԱՈՒՐԻ
*Գործադիր տնօրեն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

### ՈՐՈՇՈՒՄ N 18-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 85-Ա որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյանի 21.11.2016թ. թիվ 03/03/1/5353-16 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ առաջադրել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու անդամ՝ Ռուստամ Ակլունցին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
2. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

8. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

9. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

10. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

11. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»

ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am


______________ 2016թ. №______

Ձեր՝ ______________ №

| | |
|---|---|
| Կապան համայնքի ղեկավար | Ա. Հայրապետյանին |
| Գորիս համայնքի ղեկավար | Վ. Առուշցին |
| Սիսիան համայնքի ղեկավար | Ա. Սարգսյանին |
| Մեղրի համայնքի ղեկավար | Մ. Զաքարյանին |
| Քաջարան համայնքի ղեավար | Մ. Փարամազյանին |
| Տաթև համայնքի ղեկավար | Մ. Սիմոնյանին |
| Տեղ համայնքի ղեկավար | Ն. Շադունցին |

Հարգելի գործընկեր

Տեղական ինքնակառավարման նոր մարմինների ձևավորմամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել վերանայելու ՀՀ Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անհատական կազմը:

Երիտասարդական խորհրդի անհատական կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու համար, ՀՀ Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրության 7-11 կետերի պահանջներին համապատասխան, խնդրվում է հնարավորինս սեղմ ժամկետում տալ խորհրդի պետական և ոչ պետական հատվածները ներկայացնող 1-ական անձի թեկնածություն:

Խորհրդի կանոնադրությանը կարող եք ծանոթանալ մարզպետարանի պաշտոնական կայքէջի ,,Մարզպետարան,, բաժնի ,,Մարզպետին կից խորհուրդներ,, ենթաբաժնում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող Գ. Թաղևոսյան

հեռ. 0285-5-29-98

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 19-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 62-րդ հոդվածներով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը, Գորիս համայնքի Հարթաշեն գյուղի բնակիչ՝ Վ.Վանեսյանի 01.12.2016թ. դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գորիս համայնքի Հարթաշեն գյուղի բնակիչ՝ Վանիկ Վանեսյանին Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ, որպես դրամական օգնություն, գազանների կողմից հոշոտված ոչխարների վնասը որոշակի չափով վերականգնելու համար:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱԶԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս

1

Գորիս համայնքի
ղեկավար Ա.-Ն. Վ. Առուշանյանին

Գորիս համայնքի Բարձրաշեն
թաղի 2-րդ փողոց 15 տուն
բնակիչ Վահրիկ Վոլոդյայի
Վահեսյանից

Դիմում

Հայտնում եմ որ այսօր թվականի նոյեմբերի 29-ին գայլերը մտել են գիշերը անասունների համար փարախ, որտեղ եղել է 230 ոչխար, որից գայլերը հոշոտել են 100 ոչխար, վիրավորել 13 հատ և 25 հատ անհայտ կորած։
Խնդրում եմ հնարավորինս չափով օգնել ֆինանսապես։

Դիմող՝ [signature] Վ. Վահեսյան
01.12.2016թ
091549852

ՀՀ Սյունիքի մարզ
ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է ____
Մուտք № ____ Գործ № ____

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀՐԱՄ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 62-րդ հոդվածներով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը, Գորիս քաղաքի բնակիչ՝ Վ.Բադալյանի 28.11.2016թ. դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գորիս քաղաքի բնակիչ՝ Վահրամ Բադալյանին Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որպես դրամական օգնություն, գազանների կողմից՝ հոշոտված ոչխարների վնասը որոշակի չափով վերականգնելու համար:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐՁԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «03»
ք.Գորիս

Գորիսի համայնքի ղեկավար
Առուշ Հ. Առուշանյանին
Գորիս քաղաքի Սարյան 1-ին
նրբ. տուն 6 բնակիչ Վարդան
Ղազարյանից

# Դիմում

Հայտնում եմ որ սույն թվականի նոյեմբերի 13-ին, Գոմերս ծխվել են անասնագոմ, որտեղ եղել է 78 հատ ոչխար: Որից 44 հատը կոտորվել են, 12 հատը անհայտ են: Արդյունքում կրել ենք մեծ վնաս մոտ 2 000 000 դրամի չափով:

Գտնվում ենք սոցիալապես անապահով վիճակում, ոչխարները մեր միակ եկամտի աղբյուրն էին և խնդրում ենք Ձեզ օգնել ֆինանսապես:

Դիմող [signature] Վ. Ղազարյան
28. 11. 16թ.
0-93-02-12-39

ՀՀ Սյունիքի մարզ
ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է 30 նոյեմբերի 2016թ.
Մուտք № 152 Գործ №

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

## «ՎԵՐԻՇԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Լուծարել «Վերիշենի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. Ստեղծել լուծարման հանձնաժողով:
3. Հաստատել լուծարման հետևյալ կարգը և պայմանները՝
3.1.Լուծարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սահմանված կարգով,
3.2. պարտատերերի պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել երկու ամիս,
3.3.պարտատերերը պահանջ կարող են ներկայացնել գրավոր ձևակերպված «Վերիշենի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավաբանական հասցե առաքված գրությամբ:
4. Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել «Վերիշենի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքի «Գ.Աշոտի անվան մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

4. ԱՐՁԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

8. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

9. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

10. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 22-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 34-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-11-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 10, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի տարածքի՝ տեղական տուրքի համար գոտիավորումը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Սահմանել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սահմանել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2017 թվականի տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:

4.Սահմանել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ենթակայության ուսումնական հիմնարկներում 2017 թվականի կրթության վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:

| Կողմ -10 | Դեմ -1 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| 1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ | 1. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | 1. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ |
| 2. ԱՂԱՐԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | |

3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

4. ԱՐՂԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

8. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

9. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

10. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 5-ի N 22-Ն որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ

| N | Բնակավայր | Գոտի |
|---|---|---|
| 1 | Գորիս | I |
| 2 | Վերիշեն | II |
| 3 | Խնձորեսկ | |
| 4 | Քարահունջ | |
| 5 | Ակներ | |
| 6 | Շուռնուխ | III |
| 7 | Որոտան | |
| 8 | Բարձրավան | |
| 9 | Հարթաշեն | |
| 10 | Ներքին Խնձորեսկ | |

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5 -
ի N 22-Ն որոշման

## ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

| Տեղական տուրքերի տեսակները | Դրույքաչափերը | | |
|---|---|---|---|
| | I-ին խումբ | II-ին խումբ | III-ին խումբ |
| 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝ | | | |
| ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15000 | 13000 | 5000 |
| բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | | |
| բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 30000 | 25000 | 15000 |
| բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50000 | 40000 | 30000 |
| բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50000 | 40000 | 30000 |
| բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 80000 | 70000 | 50000 |
| ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | | | |
| գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 4500 | 4000 | 3000 |
| դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 5000 | 4000 | 2500 |
| 2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | | |
| ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3000 | 3000 | 3000 |
| բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | | | |

| | | | |
|---|---|---|---|
| գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | | | |
| 3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 5000 | 4000 | 3000 |
| 4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է` | | | |
| 1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար` | | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 6000 | 4000 | 3000 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 12000 | 11000 | 10100 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 16000 | 14500 | 13100 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 24000 | 22000 | 20100 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 32000 | 28500 | 25100 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 61000 | 53000 | 45100 |
| 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար` | | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 6500 | 4500 | 3500 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 12000 | 11000 | 10100 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 16000 | 14500 | 13100 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 24000 | 22000 | 20100 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 32000 | 28500 | 25100 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 61000 | 53000 | 45100 |
| 5. Համայնքի տարածքում` ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ` մեկ քառակուսի մետրի համար. | 350 | 300 | 200 |
| բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000-200 000 դրամ. | 240000 | 160000 | 150000 |
| գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-60 000 դրամ. | 40000 | 35000 | 30000 |

| | | | |
|---|---|---|---|
| զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝<br>հիմնական շինությունների ներսում՝ | | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 5000 | 4500 | 3000 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 7000 | 6000 | 5500 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 12500 | 11500 | 10500 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 18000 | 16500 | 15500 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 25000 | 22500 | 20500 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 38000 | 34000 | 30500 |
| ոչ հիմնական շինությունների ներսում՝ | | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1000 | 1000 | 1000 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2000 | 1500 | 1100 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4000 | 3500 | 2100 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 8000 | 6000 | 4100 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 11000 | 10000 | 8100 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 25.001 դրամ: | 19000 | 17000 | 15500 |
| ղ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000-100 000 դրամ. | | | |
| ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000-20 000 դրամ: | | | |
| 5.1 . Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ: | 75000 | 50000 | 50000 |
| 6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | | | |
| ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000-50 000 դրամ. | 50000 | 40000 | 25000 |
| բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000-100 000 դրամ. | 60000 | 55000 | 50000 |
| գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000-500 000 դրամ. | 250000 | 230000 | 200000 |
| դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000-1 000 000 դրամ. | 600000 | 550000 | 500000 |
| ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ. | 300000 | 280000 | 250000 |
| զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000-150 000 դրամ: | 120000 | 110000 | 100000 |
| 7. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ: | 0 | 0 | 0 |
| 8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ. | 1500 | 1300 | 1000 |
| բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500-3500 դրամ. | 3000 | 2800 | 2500 |
| գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ. | 1000 | 1000 | 500 |
| դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000-5000 դրամ. | | | |
| ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ: | 0 | 0 | 0 |
| 8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով: | 250 | 250 | 125 |
| 8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան: | 100 | 100 | 50 |
| 9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ: | 3000 | 3000 | 3000 |
| Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000-100 000 դրամ: | 50000 | 50000 | 50000 |
| 10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ: | 0 | 0 | 0 |
| 10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 - 500 000 դրամ | 200000 | 100000 | 50000 |
| 11. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքներում կարող են լինել 1.5, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի: | | | |
| 11.1. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ համայնքներում՝ 0.5, քաղաքային այլ համայնքներում՝ 1.0, իսկ Երևան քաղաքում՝ 7.0 գործակիցների կիրառմամբ: | | | |
| 11.2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժգ» կետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ | | | |
| ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ. | 2500000 | 2500000 | 2500000 |
| բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ. | 5000000 | 5000000 | 5000000 |
| գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ. | 7000000 | 7000000 | 7000000 |
| դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ: | 10000000 | 10000000 | 10000000 |

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի
N22 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 ՀՀ դրամ:

3. Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոման համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝ 3.000 ՀՀ դրամ:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար.

ա/ մրցույթների մասնակիցների վճար՝ 5.000 ՀՀ դրամ.

բ/ աճուրդի մասնակիցների վճար՝ 10.000 ՀՀ դրամ:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

ա/ Գորիս քաղաքում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության ամսական վճար՝ 150 ՀՀ դրամ.

բ/ Գյուղական բնակավայրերում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության ամսական վճար՝ 75 ՀՀ դրամ.

գ/ ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբագոյացման չափաքանակներն համաձայն աղյուսակի /կցվում է հավելված 2-ի աղյուսակը/:

6. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝

ա/ ըստ ծավալի, մեկ խորանարդ մետր՝ 1.000 ՀՀ դրամ

բ/ ըստ զանգվածի, մեկ տոննա՝ 2.000:

*Այլուսակ 1*
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս
համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 5-ի թիվ 22-Ն որոշման
հավելված 3-ի

# ԱՂՅՈՒՍԱԿ

## Ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբագոյացման չափաքանակների

| Հ/հ | Աշխատանքի նկարագրություն | Չափի միավոր | Աղբագոյացման նորմա խմ/ամիս | Աղբի տեղափոխման արժեք դրամ/խմ | Միավորի արժեք դրամ/ամիս |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հիվանդանոցներ | Մահճակալ | 0.051 | 2950 | 150 |
| 2. | Հյուրանոցներ /հյուրատներ/, առողջարաններ | Տեղ | 0.061 | 2950 | 180 |
| 3. | Նախակրթարաններ | Սան | 0.016 | 2950 | 47 |
| 4. | Ուսումնական հաստատություններ | Սովորող | 0.008 | 2950 | 24 |
| 5. | Մշակույթի օջախներ | Տեղ | 0.013 | 2950 | 38 |
| 6. | Մթերային խանութներ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 7. | Շուկաներ, բացօթյա առևտրի օբյեկտներ | Քմ մակերես | 0.075 | 2950 | 221 |
| 8. | Շինանյութի խանութներ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 9. | Արտադրական ապրանքների մանրածախ և մեծածախ առևտրի խանութներ, պահեստներ | Քմ մակերես | 0.018 | 2950 | 53 |
| 10. | Հասարակական սննդի օբյեկտներ | Քմ մակերես | 0.061 | 2950 | 180 |
| 11. | Հիմնարկներ, գրասենյակներ, բանկեր, վարկային կազմակերպություններ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 12. | Արտադրական ձեռնարկություններ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 13. | Բենզալցակայաններ, գազալցակայաններ | Քմ մակերես | 0.011 | 2950 | 32 |
| 14. | Այլ սպասարկման օբյեկտներ | Քմ մակերես | 0.011 | 2950 | 32 |
| 15. | Ջրամասեր | Ջինծառայող | 0.008 | 2950 | 24 |

Սույն աղյուսակի 6-14-րդ կետերում նշված օբյեկտների մակերեսը 550 քմ-ից ավելանալու դեպքում յուրաքանչյուր ավել 1 քմ մակերեսի համար հաշվարկը կատարվում է սահմանված արժեքի 50 տոկոսի չափով:

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 22-Ն
որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ենթակայության ուսումնական հիմնարկներում սահմանվում է կրթության վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մեկ երեխայի համար

ա) Գորիս քաղաքում ամսական 4.000 ՀՀ դրամ.

բ) Գյուղական բնակավայրերում ամսական 3.000 ՀՀ դրամ:

2. Երաժշտական ուսումնական հաստատություններում մեկ երեխայի համար ամսական 2.000 ՀՀ դրամ:

3. Շախմատի դպրոցում մեկ երեխայի համար ամսական 1.000 ՀՀ դրամ:

4. Արվեստի դպրոց մեկ երեխայի համար ամսական 1.100 ՀՀ դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 23-Ա

«ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 62-րդ հոդվածներով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Գորիս քաղաքի Գուսան աշոտի անվան մշակույթի կենտրոն» համայնքային հիմնարկին Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 1.750.000 /մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ ֆինանսավորման համար (սուբսիդիա):

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐՋԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2016թ. 12 «08»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 24-Ա

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 62-րդ և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Սյունիքի մարզի Քարահունջի նախադպրոցական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 1.800.000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ ֆինանսավորման համար (սուբսիդիա):

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

9. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

10. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

11. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

12. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/12/2016

## ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 62-րդ և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում ամանորյա միջոցառումների կազմակերպման նպատակով Գորիս համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ միջոցառման ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ
3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

10. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2016թ. 12 «08»
ք.Գորիս